սահման։ Որովհետեւ ՉՆՉԵԱԼ է արձանագրութիւն հրովարտակին, խափանեալ է և զօրութիւն նորա, չինեալ և սահմանեալքն լինին առանց հրամանի, ուստի պարտ է քակել եւ դարձուցանել յառաջին դիրս։ Այլ որ ասեն Հայք, թէ համեմատ հին հրովարտակին մերոյ լեալ է շինութիւնն, անտեղի է, զի 'ի նմա գրեալ է 'ի վերայ նախնի դրից։ Եւ յայսքան դարուց 'ի վեր և ոչ 'ի միում ժամանակի լեառն Զիթենեաց լեալ է սեփհական ազգին Հայոց։ Եւ տակաւին ասեն թէ բաց 'ի ՉՆՉԵԱԼ հրովարտակէն, ունիմք այլ հրովարտակ սակս նորոգութեան. այլ զի ՉՆՉԵԱԼ է արձանագրութիւն իսկական հրովարտակին, և վերջինն հիմնեալ է 'ի վերայ նորա, առաջինն որ ունի իսկապէս զօրութիւն, նա եւս ՉՆՉԵԱԼ և անգործադրելի համարի։ Ասեն դարձեալ թէ՝ ոչ երբէք փակեալ եմք զդուռն և արգելեալ զուխտաւորս, սակայն յառաջնում ամի ես ինքնին անձամբ գնացի ունելով ընդ իս զմին իշխանազուն Տէրութեան Ռուսաց՝ և գտաք փակեալ զդուռն, բաղխեցաք՝ և ոչ բացին. սպասեցաք անդ վայրկեանս 15, և առանց ուխտի դարձաք յետս, և Իշխանն բարկացեալ բողոք բարձեալ է. լուեալ է զայս և գիտէ Ալի Միւհսին Էֆէնտի։

Փոխանորդն Հայոց. Անկաւ դմբեթն 'ի շարժէ, և 'ի ձեռն Դատաւորին նորոգեցաւ ծախիւք երից ազգաց, և տուաւ իւրաքանչիւրոց մէն մի բանալի՝ որպէս ասացին Յոյնք։ Սակայն յայնժամ ոչ ընկալան Հայք զառաջարկութիւնս Դատաւորին, և բողոք բարձեալ մատուցին զվաւերական գրեանս զոր ունէին՝ և նոքօք հաստատէին թէ՝ նորոգութիւն տեղւոյն միայն սեփհական է Հայոց, այլ Դատաւորն ոչ մատոյց ունկն բանից նոցա, և զրկեալ ըզ-Հայս, յառաջ վարեաց զհրաման իւր, և մեք ծանուցաք 'ի Դուռն Տէրութեան և խնդրեցաք զնորոգութիւն գրոց մերոց. գթացեալ Արքայի շնորհեաց հրովարտակ 'ի թուին ՌՄԼԱ յամսեանն Բէպիլ էվվէլի, և ըստ մտաց նորին եղեւ շինութիւնն, պատարագն և եկեղեցական սպասքն, և արձանագրութիւն նորին ոչ է ՉՆՉԵԱԼ, այլ երկրորդին, որ ոչ միայն պարունակէ զգործ շինութեան Զիթենեաց լերին, այլ և զընդհանուր նորոգութիւն Տաճարին Ս. Յարութեան. որովհետեւ ՉՆՉԵՑԱՆ հրովարտակք Տաճարին